Ռափայել Պատկանյան

Ամիրա

Մի՞թե չեմ կարող, մարգարե չեղած,
Քու գալիք օրերն պատմել քու դիմաց .

Քանի որ բաներն այս ճամփով կերթան
Մարդ չի գըտնվիլ ճարպիկ քեզ նըման,
Որ ջուրը կրակին հետ միավորեր,
Ու հըմուտ ձեռքով աշխարհըս վարեր . . .
Քանի որ բաներն այս ճամփով կերթան,
Դու միակ տեր ես աշխարհիս վըրան,
Մարդիկ շըվարած, այլայլած բնավին,
Քեզանից հեռի՝ փըրկություն չունին:
Մի՞թե չեմ կարող, մարգարե չեղած,
Քու գալիք օրերն պատմել քու դիմաց:

Չի՛ դադրիլ մարդոց քու գովասանքը,
Օրեօր կաճի քու փառք-պարծանքը,
Աստղեր ու խաչեր ու շըքանըշան
Չեն տեղավորիլ քու կըրծքի վըրան . . .
Կըփարթամանաս տափով ու հողով,
Մեծ-մեծ տըներով, գանձով ու փողով .
Որդիքըդ կլինին մի-մի մեծատուն,
Կուտաս դու նոցա պանծալի անուն:
Մի՞թե չեմ կարող, մարգարե չեղած,

Քու գալիք օրերն պատմել քու դիմաց:

Մարդահաճները, սողունի նման,
Փորաքարշ կուգան քեզի հանդիման,
Օտարի կեղծի, սըտախոս լեզուն
Մըտքեդ կըհանե խեղճ հայի անուն .
Փառաց ու պատվի այսքան ծուխ-բուրկեն
Քու պայծառ միտքը, ավա՛ղ, կըփակեն::
Կըմոլորեցնե քեզ անցուկ փառքը,
Կը մոռացնե քու սըրբազան պարտքը:
Մի՞թե չեմ կարող, մարգարե չեղած,
Քու գալիք օրերն պատմել քու դիմաց:

Կանցնի ժամանակ՝ օր, ամիս, տարի,
Ճըրագի նման կյանքըդ կըմարի,
Քու անշունչ մարմնուն կուտան շուք վերջին,
Սուտ լացով հողին կավանդեն զիճին . . .
Գուցե բարեկամք մի քանի անգամ
Իրանց մեջ հիշեն քեզի կես-բերան .
Բայց, ավա՛ղ հինգ-տաս տարի դեռ չանցած,
Հազիվ կը հիշվի անունըդ գոված:
Մի՞թե չեմ կարող, մարգարե չեղած,
Քու գալիք օրերն պատմել քու դիմաց:

Բայց բախտը ավել էր մեզ խոստացել,
Պանծալի անունդ քու անմահացնել,
Երջանիկ վիճակ՝ սպասած դարերով,
Տալ խեղճ հայ ազգին քու հուժկու ձեռով . . .
Եվ որքա՛ն-որքա՛ն հայերըս և դո՛ւ
Պիտի կարմըրինք միշտ «առ ամոթու»: